ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 17.12.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/107

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ ՀՀ ոստիկանություն
Բողոք բերող՝ «Սենդ Էսէմէս» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
ՀՀ ոստիկանության ներկայացուցիչներ՝ Գ. Հարությունյանի, Ա. Դանիելյանի
«Սենդ Էսէմէս» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Հ. Հովհաննիսյանի,

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀ Ո ԷԱՃԾՁԲ-ՍՄՍ/2022/Հ-4» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգ, կարճ հաղորդագրություններ ուղարկելու ծառայության ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), քննության առնելով «Սենդ Էսէմէս» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) կողմից 23.11.2021թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը</u>.**

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է պարտավորեցնել «ՀՀ Ո ԷԱՃԾՁԲ-ՍՄՍ/2022/Հ-4» ծածկագրով գնահատող հանձնաժողովին 15.11.2021թ.-ի թիվ 1 որոշմամբ սահմանված տեխնիկական բնութագրում կատարել փոփոխություն, մասնավորապես՝ տեխնիկական թնութագրում սահմանված ՀՀ և ԱՀ գործող բոլոր բջջային օպերատորների հետ ուղիղ պայմանագրի առկայության պահանջը ճանաչել անվավեր, անհրաժեշտության դեպքում պարտավորեցնել սահմանել պահանջ, որ հաղթող ճանաչված անձը պետք է ունենա տեխնիկական հնարավորություն հաղորդակցությունները ՀՀ և ԱՀ ցանկացած բաժանորդի ուղարկումը և ստացումը ապահովելու համար:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 22.11.2021թ.-ին:

Բողոքներ քննող անձի 23.11.2021թ.-ի թիվ /ԲՔԱ-ԼՕ/1/19106-2021 գրությամբ բողոքը վերադարձվել է բողոքում առկա թերությունները վերացնելու համար:

Ընկերությունը 23.11.2021թ.-ին ներկայացրել է բողոքի շտկված տարբերակը:

23.11.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ բողոքը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/107 համարի ծածկագիրը:

01.12.2021թ.-ին, 02.12.2021թ.-ին և 17.12.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 02.12.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 17.12.2021թ.-ին:

2. **<u>«Սենդ Էսէմէս» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը</u>.**

«Սենդ Էսէմէս» ՍՊԸ-ն 23.11.2021թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

««Սենդ էսէմէս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը ցանկանում է մասնակցել Հայաստանի Հանրապետության Ոստիկանության՝ «ՀՀ ոստիկանության կարիքների համար ՀՀ Ո ԷԱՃԾՁԲ-ՍՄՍ/2022/Հ-4 ծածկագրով կարճ հաղորդագրություններ ուղարկելու ծառայության ձեռքբերում» ձեռքբերման նպատակով հայտարարված էլեկտրոնային աճուրդին (այսուհետ նաև Աճուրդ): Նշված աճուրդով Հրավերը հաստատվել է ՀՀ Ո ԷԱՃԾՁԲ-ՍՄՍ/2022/Հ-4 ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.11.2021թ. N 1 որոշմամբ:

Աճուրդի հայտարարությունը հրապարակվել է 15.11.2021թ., հայտերի բացումը տեղի կունենա հայտարարության հրապարակման օրվանից հաշված 10-րդ օրը ժամը 10:00-ին, այն է՝ 25.11.2021թ.:

Համաձայն հայտարարության տեխնիկական բնութագրի

«Կատարողը պետք է ապահովի հետևյալ պայմանները՝ ... ունի SMS հաղորդագրությունների ուղարկման համար կնքված ուղիղ պայմանագրեր ՀՀ և ԱՀ գործող բոլոր բջջային օպերատորների հետ:»

Գտնում ենք, որ ՀՀ և ԱՀ գործող բոլոր բջջային օպերատորների հետ ուղիղ պայմանագրերի առկայության պահանջը հանդիսանում է խտրական չափանիշ և սահմանափակում է մրցակցությունը՝ անհիմն կերպով բարդացնում է հնարավոր մասնակցությունը գնման գործընթացին, հետևյալ հիմնավորմամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև Օրենք) 46-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

«Յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարվելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործողությունները (անգործությունը) և որոշումները»:

Նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն՝

«Յուրաքանչյուր անձ իրավունք ունի սույն օրենքի համաձայն՝

1) նախքան պայմանագրի կնքումը բողոքարվելու պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները գնումների հետ կապված բողոքներ քննող անձին»:

Օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝

«Պատվիրատուի ղեկավարի հրամանով ձևավորվում է գնահատող հանձնաժողով, որը՝

1) հաստատում է հայտարարության և հրավերի տեքստերը»:

Օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝

«Եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է՝

2) գնման առարկայի բնութագրերը, նախաորակավորման հայտարարության կամ հրավերի պահանջները, ապա բողոքը ներկայացվում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը»:

Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի համաձայն՝

«Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝

1) իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ,

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման»

Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝

Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

Օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝

«Չեն կարող սահմանվել մասնակցի՝ գնումներին մասնակցելու իրավունքի և որակավորման հետ կապված այնպիսի չափանիշներ, որոնք՝

2) խտրական են և սահմանափակում են մրցակցությունը՝ անհիմն կերպով բարդացնում կամ պարզեցնում են հնարավոր մասնակցությունը գնման գործընթացին»:

Բողոքաբեր «Սենդ էսէմէս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը հանդիսանում է SMS հաղորդագրություններ ուղարկելու ծառայությունով մասնագիտացված ընկերություն, որը շահագրգռված է մասնակցել ԷԱՃԾՁԲ-ՍՄՍ/2022/Հ-4 ծածկագրով գնման ընթացակարգին, սակայն ՀՀ և ԱՀ որոշ օպերատորների հետ չունի կնքած ուղիղ պայմանագրեր: Ամեն դեպքում՝ ուղիղ պայմանագրերի բացակայությունը որևէ կերպ չի կարող խաթարել բողոքաբերի կողմից Աճուրդով սահմանված ծառայությունները մատուցելու գործընթացին:

ՀՀ Ոստիկանության կողմից սահմանվել է այնպիսի չափանիշ, որն ուղղակիորեն խոչընդոտ է հանդիսանում Աճուրդին տնտեսվարող սուբյեկտների կողմից մասնակցելու համար: ՀՀ Ոստիկանության կարիքների համար ՀՀ Ո ԷԱՃԾՁԲ-ՍՄՍ/2022/Հ-4 ծածկագրով կարճ հաղորդագրություններ ուղարկելու ծառայությունը հնարավոր է մատուցել նաև անուղղակի եղանակով, մասնավորապես՝ այն օպերատորի հետ, ում հետ չի կնքվել ուղիղ պայմանագիր, հնարավոր է կազմակերպել կարճ SMS հաղորդագրությունների ուղարկումն այն օպերատորի միջոցով, ում հետ առկա է ուղիղ պայմանագիր: Այնինչ Աճուրդն հնարավոր է իրականացնել նաև առանց այդ չափանիշի՝ ապահովելով ազատ տնտեսական մրցակցությունը և ընդլայնելով պետական գնումների շրջանակներում կազմակերպվող գնման ընթացակարգերին մասնակցող տնտեսվարող սուբյեկտների շրջանակը:

Այնինչ, վերոնշյալ չափանիշ պարունակող հրավերին, ստացվում է, կարող է մասնակցել միայն այնպիսի տնտեսվարող սուբյեկտ, որը ՀՀ և ԱՀ գործող բոլոր բջջային օպերատորների հետ ունի ուղիղ պայմանագիր: Այս հանգամանքն ուղղակիորեն հանգեցնում է մրցակցության սահմանափակմանը՝ այլ տնտեսվարող սուբյեկտներին դուրս մղելով Աճուրդին մասնակցելուց:

Այսպիսով, ՀՀ և ԱՀ գործող բոլոր բջջային օպերատորների հետ ուղիղ պայմանագրերի առկայության պահանջը հանդիսանում է խտրական չափանիշ և սահմանափակում է մրցակցությունը՝ անհիմն կերպով բարդացնում է հնարավոր մասնակցությունը գնման գործընթացին, քանի որ տեխնիկական բնութագրով սահմանվել է տնտեսական մրցակցությունը սահմանափակող, օբյեկտիվորեն չհիմնավորված խտրական պայման, ինչը հանգեցնում է տնտեսվարող սուբյեկտների կողմից Ոստիկանության կարիքների համար կազմակերպված գնման ընթացակարգին մասնակցելու հնարավորության սահմանափակման:

Նշված չափանիշը հաստատվել է ՀՀ Ո ԷԱՃԾՁԲ-ՍՄՍ/2022/Հ-4 գնման ընթացակարգի համար ձևավորված գնահատող հանձնաժողովի կողմից 15.11.2021թ. N 1 որոշմամբ: Ինչպես բխում է Օրենքի 46-րդ հոդվածից, յուրաքանչյուր անձ իրավունք ունի նախքան պայմանագրի կնքումը բողոքարկելու պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները գնումների հետ կապված բողոքներ քննող անձին: Միևնույն ժամանակ Օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետից բխում է, որ վերոնշյալը ներառում է նաև գնման առարկայի բնութագրերը, նախաորակավորման հայտարարության կամ հրավերի պահանջները բողոքարկելու հնարավորություն, քանի որ գնման առարկայի բնութագրերը, նախաորակավորման հայտարարության կամ հրավերի պահանջները բողոքարկելու համար սահմանվել են հատուկ ժամկետներ, այն է՝ մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը:

Հայտնում ենք նաև, որ ՀՀ Ոստիկանությունը նախկինում ևս աչքի է ընկել նման խտրական և մրցակցությունը սահմանափակող չափանիշներով, մասնավորապես ՀՀ Մրցակցության պաշտպանության հանձնաժողովը 2021 թվականի սեպտեմբերի 6-ի թիվ 231-Ա որոշմամբ ՀՀ Ոստիկանության՝ որոշ գնման ընթացակարգերով սահմանված չափանիշները (գործողությունները) որակել է որպես պետական մարմնի կողմից տնտեսվարող սուբյեկտների նկատմամբ խտրական պայմանների սահմանում և կիրառում, ինչի համար Ոստիկանությանը տվել է նախազգուշացում և հանձնարարել հայտարարվելիք գնման ընթացակարգերի տեխնիկական բնութագրերը կազմել՝ հնարավոր մասնակիցների համար ապահովելով հավասար մրցակցային պայմաններ:

Գտնում ենք, որ տեխնիկական բնութագրի վերոնշյալ պայմանն անվավեր ճանաչելու դեպքում գնման ընթացակարգի հնարավոր մասնակիցների համար կապահովվեն հավասար մրցակցային պայմաններ, ինչը բողոքաբերին թույլ կտա մասնակցել ՀՀ Ոստիկանության գնման ընթացակարգին, քանի որ այս պահին՝ բողոքարկվող խտրական պայմանի առկայության դեպքում նշված գնման ընթացակարգին մասնակցությունն անհնար է: Ելնելով վերոնշյալից, բողոքաբերը, ով շահագրգռված է խտրական պայմանն անվավեր ճանաչելու հարցում, առաջնորդվելով Օրենքի 46-րդ և 50-րդ հոդվածներով, ներկայացնում է սույն բողոքը:»:

Վերոգրյալի հիման վրա՝ Ընկերությունը Բողոքներ քննող անձին խնդրել է պարտավորեցնել «ՀՀ Ո ԷԱՃԾՁԲ-ՍՄՍ/2022/Հ-4» ծածկագրով գնահատող հանձնաժողովին 15.11.2021թ.-ի թիվ 1 որոշմամբ սահմանված տեխնիկական բնութագրում կատարել փոփոխություն, մասնավորապես՝ տեխնիկական թնութագրում սահմանված ՀՀ և ԱՀ գործող բոլոր բջջային օպերատորների հետ ուղիղ պայմանագրի առկայության պահանջը ճանաչել անվավեր, անհրաժեշտության դեպքում պարտավորեցնել սահմանել պահանջ, որ հաղթող ճանաչված անձը պետք է ունենա տեխնիկական հնարավորություն հաղորդակցությունները ՀՀ և ԱՀ ցանկացած բաժանորդի ուղարկումը և ստացումը ապահովելու համար:

3. <u>ՀՀ ոստիկանության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 23.11.2021թ.-ին թիվ /ԲՔԱ-ԼՕ/2/19186-2021 գրությամբ դիմել է ՀՀ ոստիկանությանը (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «Սենդ Էսէմէս» ՍՊԸ-ի կողմից 23.11.2021թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն ստանալով փաստաթղթեր ներկայացնելու և գրավոր դիրքորոշում հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին՝ ներկայացել է հրավիրված նիստերի, ներկայացնելով նաև «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված փաստաթղթերը և գրավոր դիրքորոշում՝ հայտնելով հետևյալը.

«Ի պատասխան «Սենս էսէմէս» ՍՊ ընկերության կողմից 23.11.2021 թվականին ներկայացրած բողոքի՝ հայտնում եմ Ձեզ ՀՀ Ոստիկանության կողմի առարկությունները և դիտողությունները հետևյալի մասին.

Հայաստանի Հանրապետությունում գործող բջջային կապի օպերատորները կարճ հաղորդագրությունների ուղարկման ծառայությունների մատուցման համար պայմանագրեր է կնքում առևտրային կազմակերպությունների հետ, որոնք համաձայն կնքված պայմանագրի կարճ հաղորդագրություններ են գնում բջջային օպերատորներց և այն վերավաճառում ՀՀ շուկայում: Կարճ հաղորդագրությունների ծառայություն մատոցող կազմակերպությունները ՀՀ գործող բջջային օպերատորների կողմից անվանվում են «ՎԱՍ» ծառայություններ մատուցող ընկերություններ: ՀՀ բջջային օպերատորները բոլոր ՎԱՍ ծառայություն մատուցող ընկերությունների համար սահմանում են կարճ հաղորդագրությունների ձեռք բերման միևնույն սակագին: Քանի որ բոլոր ՎԱՍ օպերատորների համար բջջային օպերատորների կողմից սահմանվում է միևնույն սակագինը, միջնորդավորված ծառայություններ մատուցող ընբկերությունները շահույթ ակնկալելով չեն կորող սահմանել նվազագույն սակագին, ինչպես ՎԱՍ օպերատորները: Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում գործում է թվով մինչև 10 (տասը) ՎԱՍ ծառայություն մատուցող ընկերություն, որոնք ՀՀ բջջային օպերատորների հետ նմանատիմ կարճ հաղորդագրությունների ուղղարկման պայմանագրեր ունեն կնքված:

Համաձայն ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 22-րդ կոտով սահմավում է, որ Գնման առարկայի բնութագրերը սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանք պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ և արտադրողներ:

ՀՀ ՈՍ ճանապարհային ոստիկանության պատասխանատու ստորաբաժանման կողմից ՀՀ Ո-ԳՀԾՁԲ-ՍՄՍ-2022/Հ-4 ծածկագրով աճուրդի հայտարարության համար մշակվել է նմանատիպ տեխնիկական նկարագիր, քանի որ ՀՀ Ո-ԳՀԾՁԲ-ՍՄՍ-2022/Հ-4 ծածկագրով գնանշման հարցման արդյունքում ՀՀ ՈՍ ձեռք է բերելու ծառայություններ, որի կարճ հաղորդագրությունների միջոցով տրանսպորտային միջոցի սեփականատիրոջը պետք է ուղարկվեն մականգամյա ծածկագրեր, որը հնարավորություն է ստաղծվում մուտք գործել ՀՀ ՈՍ ՃՈ համակարգ, տեսնել մի շարք տեղեկատվություն և իրականացնել գործարքներ: Տեղեկատվությունը, որը հասանելի է դառնում համակարգ մուտք գործելիս, պարունակում է անձնական տվյալներ, ռազմական գաղտնիք պարունակող տվյալներ, ինչպես նաև հնարավոր է կցել շահագործխող վարորդ իրավախատումների համար և նույնիսկ սկսել տրանսպորտային միջոցի օտարման գործընթաց: Նման ֆունկցիոնալ գործառույթների համար պետք է պահպանել անվտանգության շատ բարձր մակարդակ, որը պետք է համապատասխանի ՀՀ իրավապահ մարմինների կողմից սահմանված պահանջներին: ՀՀ գործող բջջային օպերատորների հետ ուղղիղ պայմանագրերի

բացակայության դեպքում ծառայություն մատուցող ընկերությունը պետք է օգտվի այլ ՎԱՍ ընկերության սարքավորումածրագրային հարթակներից, որը ստեղծում է ևս մեկ հավելյալ օղակ նմանատիպ տեղեկատվության հնարավոր տիրապետման համար: Անվտանգորթյան նկատառումներից ելնելով յուրաքանչյուր հավելյալ օղակը նվազեցնում է տեղեկատվության անվտանգության և վերահսկողության մակարդակը, որը անընդունելի է ,և պարունակում են մեծ ռիսկեր՝ իրենց հետևանքներով:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ Հոկտեմբերի 1-ից ուժի մեջ է մտել «Հանրային շարժական կապի ցանցերով բացառապես պատվիրված կարճ հաղորդագրությունների ուղարկման ապահովմանն ուղղված պահանջներ սահմանելու մասին» Հանրային Ծառայությունները Կարգավորող Հանձնաժողովի 22.09.2021թ.թիվ 354ն որոշումը: Համաձայն որոշման 4-րդ կետի Հանձնաժողովին պետք է ներկայացվի որոշման 3-րդ կետով սահմանված ստորև ինֆորմացիան:

3. Ծառայություններ մատուցողի կողմից պետական մարմինների համար օգտագործվող ալիասներով կարճ հաղորդագրությունների ուղարկումն Օպերատորն ապահովում է Ծառայություններ մատուցողի կողմից անվտանգության ապահովման միջոցների վերաբերյալ հետևյալ տեղեկությունների (հիմնավորումներով) ներկայացման դեպքում.

1) Ծառայություններ մատուցողի և համապատասխան պետական մարմնի միջև վիրտուալ մասնավոր ցանցի (VPN) առանձնացված (պաշտպանված) կապուղու առկայության մասին,

2) կարճ հաղորդագրությունները Ծառայություններ մատուցողի և համապատասխան պետական մարմնի կողմից նախապես ամրագրված՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գործարկված, Հայաստանի Հանրապետությունում օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցված (հաշվառված) անձանց (իրավաբանական անձ և անհատ ձեռնարկատեր) ամրագրված ինտերնետ արձանագրության հասցեներից (IP Address) ուղարկելու մասին,

3) սերվերները՝ Հայաստանի Հանրապետության տարածքում տեղակայված լինելու վերաբերյալ:

Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև այն հանգամանաքը, որ ՀՀՎԱ-ԷԱՃԾՁԲ-21/22 ծածկագրով «Վարչապետի աշխատակազմի կարիքների համար կարճ հաղորդագրությունների ուղարկման ծառայություններ» ձեռքբերման նպատակով հայտարարված էլեկտրոնային աճուրդի տեխնիկական բնութագրում նույնպես նշված է այն պահանջը, որ ծառայություններ մատուցող ընկերությունը պետք է ունենա ուղղիղ կնքված

պայմանագրեր ՀՀ գործող բոլոր բջջային օպերչատորների հետ՝ կարծում ենք, որ ՀՀ Ո-ԳՀԾՁԲ-ՍՄՍ-2022/Հ-4 ծածկագրով աճուրդի հայտարարության տեխնիկական բնութագիրը կազմված է ճիշտ՝ հաշվի առնելով ՀՀ ՈՍ կարիքները և անվտանգության ապահանջները, իսկ «Սենս էսէմէս» ՍՊ ընկերության ներկայացրած դիտարկումները անտեղի են և չեն բխում պետության շահերից:»:

4. <u>ԳԲՔԱ-ԼՕ-2021/107 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ ոստիկանության կողմից կարճ հաղորդագրություններ ուղարկելու ծառայության ձեռքբերման նպատակով 15.11.2021թ.-ին հայտարարվել է «ՀՀ Ո ԷԱՃԾՁԲ-ՍՄՍ/2022/Հ-4» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգի հրավերի հավելված 6-ով՝ պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագրի հավելված 1-ով՝ տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույցով (այսուհետ նաև՝ Հավելված 1) սահմանվել է նաև, որ Կատարողը պետք է երաշխավորի, որ ծառայությունների մատուցման համար ունի բոլոր իրավական փաստաթղթերը, կարող է ապահովել ամբողջական ծածկույթ ՀՀ տարածքում և ունի SMS հաղորդագրությունների ուղարկման համար կնքված ուղղիղ պայմանագրեր ՀՀ և ԱՀ գործող բոլոր բջջային օպերատորների հետ:

iii. Բողոքներ քննող անձը 07.12.2021թ.-ին թիվ Ն/ԲՔԱ-ԼՕ/1/30222-2021 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությունը և խնդրել է հայտնել «ՀՀ Ո ԷԱՃԾՁԲ-ՍՄՍ/2022/Հ-4» ծածկագրով ընթացակարգի մասնակցության քանի հայտ է ներկայացվել:

iv. Ի պատասխան վերոնշյալ գրության, ՀՀ ֆինանսների նախարարությունը 14.12.2021թ.-ին ներկայացված գրությամբ հայտնել է, որ «ՀՀ Ո ԷԱՃԾՁԲ-ՍՄՍ/2022/Հ-4» ծածկագրով ընթացակարգին ներկայացվել է թվով երկու (2) մասնակցության հայտ, որոնք համակարգում ճանաչելի չեն մինչև հակադարձ աճուրդի ավարտը:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ «Սենդ Էսէմէս» ՍՊԸ-ի կողմից 23.11.2021թ.-ին ներկայացված բողոքն անհիմն է և ենթակա մերժման ամբողջությամբ, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց

ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

5. Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

ՀՀ կառավարության 18.05.2017թ.-ի թիվ 534-Ն հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 10-րդ կետի համաձայն՝ էլեկտրոնային աճուրդով գնումների կատարման և ընտրված մասնակցի հետ պայմանագրի կնքման ժամանակ գործում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգով նախատեսված կարգավորումները.....:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 21-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ եթե գնման գործընթացների կազմակերպման ժամանակացույցով այլ ժամկետ նախատեսված չէ, ապա գնման պահանջի ծագման օրվան հաջորդող քսան աշխատանքային օրվա ընթացքում պատասխանատու ստորաբաժանումը՝ կազմում և հաստատում է գնման հայտը, որը ներառում է գնման առարկայի բնութագրերը: Ապրանքների գնման դեպքում նշվում է նաև մասնակցի կողմից առաջարկվող ապրանքային նշանի, ֆիրմային անվանման, մակնիշի և արտադրողի վերաբերյալ տեղեկատվության ներկայացման անհրաժեշտությունը, իսկ պայմանագրի կատարման փուլում ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակի կամ համապատասխանության սերտիֆիկատի ներկայացման անհրաժեշտությունը, եթե դրանք կիրառելի են տվյալ ապրանքի համար: Ընդ որում, պայմանագրի կատարման փուլում այն կնքած մասնակցից ծագման երկրի սերտիֆիկատ չի պահանջվում:

Կարգի 22-րդ կետի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը և մասնակիցների որակավորման հատկանիշների գնահատմանը ներկայացվող չափանիշները սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ...:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Ընթացակարգի հրավերի թիվ 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանված ցանկացած պահանջ պետք է ապահովի մրցակցության հավասար պայմաններ հնարավոր մասնակիցների համար, օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինի այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը:

Տեխնիկական բնութագրով սահմանված այն չափորոշիչների մասով, որոնք պարունակում են հղում ապրանքային նշանին, սահմանված պետք է լինի «կամ համարժեք» արտահայտությունը:

Բողոքներ քննող անձը փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական,

գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Բողոքներ քննող անձը փաստում է նաև, որ Ընթացակարգի գնման առարկայի բնութագրերն ամբողջությամբ և հստակ պետք է նկարագրեն ձեռքբերվող ապրանքի հատկանիշները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը, հնարավոր մասնակիցների համար պետք է ապահովեն մրցակցության հավասար պայմաններ, դրանով իսկ բացառելով գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացումը: Ինչպես նաև բնութագիրն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք պետք է լինի այն կարիքին, որի բավարարման նպատակով հայտարարվել է Ընթացակարգը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ ոստիկանության կողմից կարճ հաղորդագրություններ ուղարկելու ծառայության ձեռքբերման նպատակով 15.11.2021թ.-ին հայտարարված «ՀՀ Ո ԷԱՃԾՁԲ-ՍՄՍ/2022/Հ-4» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի հրավերի հավելված 6-ով՝ պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագրի հավելված 1-ով՝ տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույցով (այսուհետ նաև՝ Հավելված 1) սահմանվել է նաև, որ Կատարողը պետք է երաշխավորի, որ ծառայությունների մատուցման համար ունի բոլոր իրավական փաստաթղթերը, կարող է ապահովել ամբողջական ծածկույթ ՀՀ տարածքում և ունի SMS հաղորդագրությունների ուղարկման համար կնքված ուղղիղ պայմանագրեր ՀՀ և ԱՀ գործող բոլոր բջջային օպերատորների հետ: Բողոքներ քննող անձը 07.12.2021թ.-ին թիվ Ն/ԲՔԱ-ԼՕ/1/30222-2021 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությունը և խնդրել է հայտնել «ՀՀ Ո ԷԱՃԾՁԲ-ՍՄՍ/2022/Հ-4» ծածկագրով ընթացակարգի մասնակցության քանի հայտ է ներկայացվել: Ի պատասխան վերոնշյալ գրության, ՀՀ ֆինանսների

նախարարությունը 14.12.2021թ.-ին ներկայացված գրությամբ հայտնել է, որ «ՀՀ Ո ԷԱՃԾՁԲ-ՍՄՍ/2022/Հ-4» ծածկագրով ընթացակարգին ներկայացվել է թվով երկու (2) մասնակցության հայտ, որոնք համակարգում ճանաչելի չեն մինչև հակադարձ աճուրդի ավարտը:

Օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ ենթակետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին բողոքը ներկայացվում է գրավոր, ստորագրված, դրանում ներառելով՝ … բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները:

Վկայակոչված հոդվածի վերլուծությունից հետևում է, որ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը բողոքի քննությունը հարուցում և իրականացնում է միմիայն ներկայացված բողոքի հիման վրա և ենթակա է քննության միայն դրա սահմաններում: Ընդ որում, բողոք ներկայացնելով՝ շահագրգիռ անձն ինքնուրույն է որոշում իր բողոքի պահանջի շրջանակը, ինչը տնօրինչականության սկզբունքի դրսևորման արդյունք է, որն անձի՝ ՀՀ Սահմանադրությամբ և օրենքով նրան տրված հնարավորությունն է սեփական հայեցողությամբ տնօրինելու իր նյութական և դատավարական (ընթացակարգային) իրավունքները և դրանց պաշտպանության եղանակները:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում արձանագրել, որ բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները ներկայացնելու պարտականությունը դրված լինելով բողոքաբերի վրա, վերջինս է հանդիսանում շահագրգիռ այն անձը, ով, ինքնուրույն որոշելով իր բողոքի պահանջի շրջանակը, պետք է բողոքի հետ միաժամանակ ներկայացնի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները՝ որպես բողոքի բավարարմանն ուղղված էական նշանակություն ունեցող հիմքեր ու հիմնավորումներ: Ընդ որում, օրենսդիրը չի սահմանափակում բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները ներկայացնել միայն բողոքի հետ միաժամանակ, այլև բողոքաբերը կարող է ու զրկված չէ լրացնելու/փոփոխելու/նվազեցնելու բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները գործի քննության ընթացքում:

Զարգացնելով վերոգրյալ իրավական դիրքորոշումը՝ Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել նաև, որ փաստացի և իրավական հիմքեր, ապացույցներ ներկայացնելու պարտականությունը կրում է նաև բողոքի քննությանը ներգրավված յուրաքանչյուր անձ և վերջինիս իր առարկությունների հիմքում ընկած փաստական հանգամանքները, որոնք ուղղված են բողոքով վկայակոչված փաստերի հերքմանը, պետք է նույնպես պարունակեն, ըստ էության, Օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ ենթակետով սահմանված դրույթներով նախատեսված փաստացի և իրավական հիմքեր, ապացույցներ:

Վերոգրյալ իրավական կարգավորումների և վերլուծությունների արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ բոլոր այն դեպքերում, երբ բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է գնման առարկայի բնութագրերը, նախաորակավորման հայտարարության կամ հրավերի պահանջները, մասնավորապես՝ երբ բողոքի վեճի առարկան հանդիսանում է հրավերում առկա որևէ պայմանի՝ գնումների օրենսդրությանը հակասելու հանգամանքը, ապա այդ՝ բողոքով վկայակոչված փաստական հանգամանքի ժխտման ապացուցման բեռը պետք է կրի պատվիրատուն, քանի որ Կարգի 22-րդ կետի իմաստով գնման առարկայի բնութագրերը սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ և արտադրողներ: Ուստի, նման դեպքերում, բողոքի քննության ընթացակարգին մասնակցող պատվիրատուն է պարտավոր ապացուցել իր՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի պահանջների և բողոքի առարկությունների հիմքում դրված ու գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերն ու գնումների մասին ՀՀ օրենսդրությանը համապատասխանելու հանգամանքը:

Վերոնշյալ իրավական նորմերի ու փաստական հանգամանքների հիման վրա, դրանք համադրելով Պատվիրատուի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշման և Ընկերության կողմից ներկայացված բողոքի իրավական ու փաստական հանգամանքներին, ինչպես նաև հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Ընթացակարգին մասնակցության հայտ են ներկայացրել թվով երկու մասնակից՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ տվյալ դեպքում, Պատվիրատուն Բողոքներ քննող անձին ներկայացրել է վերաբերելի և բավարար ապացույց առ այն, որ վերջինիս կողմից թույլ չի տրվել Օրենքի 13-րդ հոդվածով սահմանված դրույթների խախտում՝ հնարավոր մասնակիցների մրցակցության հավասար պայմանների խոչընդոտման առումով, և որ «ՀՀ Ո ԷԱՃԾՁԲ-ՍՄՍ/2022/Հ-4» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի հրավերի Հավելված 1-ով նախատեսված՝ տեխնիկական բնութագիրը կազմված է և համապատասխանում է Օրենքի 13-րդ հոդվածի և Կարգի 22-րդ կետի դրույթներին, սահմանված տեխնիկական բնութագրում առկա չափորոշիչները չեն խոչընդոտում հնարավոր մասնակիցների մրցակցության հավասար պայմաններ ունենալու իրավունքը:

Բողոքի քննության ընթացքում ձեռք բերված փաստական հանգամանքների հիման վրա՝ Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ ընթացակարգի տեխնիկական բնութագրերը համապատասխանում են Օրենքի 13-րդ հոդվածով և Կարգի 22-րդ կետով սահմանված պահանջներին, ապահովում են մրցակցության հավասար պայմաններ

մասնակիցների համար և բավարարում են մեկից ավելի հնարավոր մասնակիցների և արտադրողների մասնակցությունը:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Սենդ Էսէմէս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքով բերված փաստերն ու հանգամանքները՝ հնարավոր մասնակիցների մրցակցության հավասար պայմանների խոչընդոտման առումով, հիմնավոր չեն, իսկ Ընթացակարգի պահանջներն հիմնավոր են, ինչի արդյունքում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից թույլ չի տրվել Օրենքի 13-րդ հոդվածով և Կարգի 22-րդ կետով սահմանված պահանջների խախտում, որպիսի պայմաններում ՀՀ ոստիկանության կողմից հայտարարված «ՀՀ Ո ԷԱՃԾՁԲ-ՍՄՍ/2022/Հ-4» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի տեխնիկական բնութագիրն ենթակա չէ փոփոխման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

«Սենդ Էսէմէս» ՍՊԸ-ի կողմից 23.11.2021թ.-ին ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2021/107 ծածկագրով բողոքը մերժել ամբողջությամբ՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**